

ՀԱՅԿԱԿԱՆ

ՌԱԶՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

(Շար. տե'ս Ռազմավեպ 1949, էջ 85)

Գ. - ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԶՄԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ

Բաղդատութեան համար, Հայաստանի դրացի ժողովուրդներու ռազմական շինութիւնները համառօտիւ աչքէ անցնելէ վերջ, կանգ առնենք մեր ազգային նրամանօրինակ շինութիւններու առջեւ եւ մանրամասնօրէն քննենք դանոնը:

Հայաստան ըլլալով պատերազմի եւ ճակատամարտներու գերազանց վայր մը, ուրկէ եկած անցած են բազմատեսակ եւ բազմաթիւ բանակներ եւ ուր ճակատած են զանազան ժողովուրդներ, չէր կրնար պատերազմական շինութիւններու տեսակէտէն՝ յետամնաց դիրքի մը վրայ մնացած ըլլալ: Արդարեւ, ամենահին ժամանակներէ ի վեր Հայաստանի ժողովուրդը միշտ հետամուտ է եղած օգտագործելու իր երկրին բնական դիրքը, կարեւոր կէտերուն վրայ կառուցանելով ամրոցներ, բերդեր եւ բերդաքաղաքներ, արշաւող օտարներէն պաշտպանուելու համար:

Եւ որովհետեւ Հայաստան քարէ երկիր է, ամենահին շինութիւններէն սկսեալ ամենանորագոյն շինութիւնները, միշտ քարէ եղած են: Ասիկա ոչ միայն խաղաղ, բնակութեան կառուցումներու եւ յիշատակարաններու համար, այլ նա մանաւանդ զինուորական շինութիւններու համար: Եւ այս իսկ պատճառով հայկական ռազմաշինութիւնը խորապէս տարբերեցաւ իրեն դրացի Ասորեստանի եւ Պարսկաստանի շինութիւններէն: Հայերը

քարէ կը շինէին իրենց ամրոցներն՝ ու բերդերը երբ տակաւին Բիւզանդիոն դոյութիւն չունէր:

Բնական է հայկական այս շինութիւնները կրեցին իրենց դարուն՝ շինարուեստի տուեալներուն եւ գործածուած շինութեանց գործիքներուն ազդեցութիւնը, կերտուածքի նրբութեան եւ կատարելագործումի տեսակէտով:

Հայաստանի մէջ, ամենահին ռազմական շինութիւններու կը հանդիպինք արդէն քարի եւ անագապղինձի դարաշրջաններուն: Ասոնք Կիկլոպեան շինութիւններ են, կազմուած հսկայ ծաւալով քարի կտորներու իրարու վրայ շարուածքով: Այսպէս կազմուած հսկայ պարիսպը, բնական է չէր կրնար ներկայացնել նուրբ շարուածքով որմեր: Այդ շրջաններուն նոյնիսկ գործածուած քարերը հազիւ թէ քիչ թէ շատ կարելի կ'ըլլար կոփել ու կոկել, անագապղինձէ գործիքներուն թոյլ տուած չափովը: Որովհետեւ անագապղինձէ գործիք մը կակուղ է եւ չուտով կը վնասուի կարծր քար մը տաշելու ատեն, ինչ որ արդեւ կ'ըլլար որմերուն նրբահետեւութեան: Ծնորհիւ այս պարապային, հնախոյններուն կարելի կ'ըլլայ ճշտել ինչ ինչ հին շինութեանց դարաշրջանը:

Այսպէս կառուցուած պարիսպի մը բաղկացուցիչ հսկայ քարերուն միջեւ կը մնար անխուսափելի բացուածքներ, ծակեր. որոնք զէչ ազէչ կը լեցուէին քարի փոքր կտորներէն, որով եւ ցետով: Նման

շինուածքի մը զանազան մասերը չէին կրնար միակտուր կառուցուածք մ'ունենալ: Եւ շինուածքն ալ պարիսպէ մ'աւելի՝ զինուորական առումով՝ պարզ պատի մը երեւոյթը ունէր քաղաքը սահմանափակող, առանց որեւէ ռազմական յարդարումի: Այսուհանդերձ, այսպիսի պարիսպներու ետեւն էր որ մեր նախահայրերը կուտէր են իրենց անկախութիւնը պաշտպանելու համար:

Պէտք է ըսեմ, թէ իր դարուն համար նման շինուածքով պարիսպ մը լիուրի բաւարար էր քաղաքը կամ համայնքը պաշտպանելու: Որովհետեւ անոր զէմ գործածուած զէնքերն ալ նոյնքան նախնական էին:

Քարի եւ անագապղինձի շրջանին, թագաւորներու կամ իշխաններու յատուկ ամրոցները Հայաստանի մէջ կը շինուէին բլուրի մը վրայ: Բլուրը բազմաշատ պարիսպներով շրջապատուէ վերջ, անոր դաւթին վրայ կը կառուցանէին քառակուսի իշխանական բնակարանը: Այս պարիսպները 2½-5 մետր հաստութիւն կ'ունենային եւ կազմուած էին չորս կամ հինգ շարք քարերէ: Կառուցումի դժուարութեան պատճառաւ այս պարիսպները չէին կրնար շատ բարձր շինուիլ: Ըստ Թորամանեանի ենթադրութեան, անոնց բարձրութիւնը չորս կամ հինգ մետրէն աւելի պէտք չէ եղած ըլլայ⁽⁸⁾: Իշխանական այս ամրոցը հեռուէն շրջապատուած կ'ըլլար բարձր բլուրներով, որոնց դաւթներուն վրայ ալ շինուած էին պարսպապատ ամրոցներ: Այս մեծ ու փոքր բլուրներուն եւ ամրոցներուն միջեւ կը տարածուէր նախնական քաղաքը:

Պէտք է ըսել՝ թէ այդ շրջանի Հայաստանի բնակիչները ռազմական որոշ հաս-

(8) Թորոս Թորամանեան. «Հայկական ճարտարապետութիւն» Ա. մաս, Հայաստանի նախնական ճարտարապետական միջոցներ. Երեւան. 1942, էջ 12 և շար.

կացողութիւն մ'ունէին: Անոնք կ'ընտրէին իրենց ամրոցներու շինութեան համար այնպիսի ժելուտ վայրեր, որոնք բերդութեան շինութեան պէտք եղած քարը գիրաւ տրամադրելէ դատ, բերդերուն առջեւ մընար տակաւին բաւական լայն քարուտ տարածութիւն մը, դժուարանցանքի թըշնամի բանակին համար: Անցողակի ըսենք՝ թէ քանակորդ դարու ռազմավարութիւնը աւելի բան մը չհնարեց, երբ իր ամրոցներուն առջեւ շինեց արուեստական պէթոնէ քարակոյտեր, հրասայլերու յառաջնադարումը կեցնելու համար:

Այս ձեւ շինութիւններու հետքեր կը գտնենք Հաճի Խալիլի, Հոռոմի, Ատրեամանի, Խըրխ Տէկիրմէնի, եւն. աւերակներուն մէջ:

Թորամանեան ծանրանալով Հաճի Խալիլի բերդին նկարագրութեան վրայ՝ կը դրէ.

«Նախնադարեան ամրոցներու մէջ իմ կարծիքով, ամէնէն հնագոյններէն մէկն է Հաճի-Խալիլ գիւղի մօտի բազմադարեան բերդը և քաղաքատեղին: Այս ամրոցին՝ Հաճի-Խալիլի գիւղացիք «Քալա իչի» կ'անուանեն, առանց իրենց տուած անունին նշանակութիւնը հասկնալու և գիտնալու տեղին պատմական անցեալը: Թէեւ շատ քայքայուած է այս ամրոցը, սակայն չաժամանակակից հնագոյն ամրոցներու հետ: Նախապատմական առաջին շրջաններու սովորութեանը համաձայն, ամրոցին համար ընտրուած է, այժմեան գիւղին մօտիկ, չափազանց քարաքարուտ սարերուն ամենաբարձրը, որուն գագաթին վրայ շինուած է իր ժամանակի իշխանին կամ տոհմապետին բնակարանը, ուրիշ յաւակից փոքր շինութիւններով:

Հնագոյն դարաշրջաններուն, երբ որմնաշինական մշակուած գործիքները և քարերը տեղափոխելու անհրաժեշտ միջոցներէ գուրկ էին, ընդհանրապէս կ'ընտրէին քարաքարուտ բլուրները որպէս բերդատեղի և անոնց ստորոտն ալ որպէս քաղաքատեղի, տեղին վրայ գտնուած քարերէն օգտուելու համար:

Այդ քարաքարուտի քարերն, առանց փոխադրելու, տեղին վրայ օգտագործուելու մէջ միանգամայն կը բացակայի արուեստ և ճարտարութիւն: Այդ ժամանակուայ որմնաշինութեան մէջ զուտ մարդկային բիրտ ոյժը միայն շահագործուած էր:

Ամբողջ բլուրը շրջապատուած է, մէկը միւսէն



քանի մը քայլ հեռավորութեամբ կրկնուպեան զանազան հորիզոնական պարիսպներով: Բացի հորիզոնական շրջանակէն, տեղ տեղ, վերէն վար շառաւիղաձեւ պատեր եւս շինուած են, հորիզոնական որմերուն ընդմէջ: Որպէս թէ ամրոցին մէկ մասը գտնէին միւսէն: Այսպէսով ամրոցը բաժնուած է իրարմէ նկատելի հատուածներու, հաւանաբար ռազմական նկատումներով:

Չափազանց հետաքրքրական են այս բլուրին շուրջ պարսպելու համար ի գործ դրուած ջանքերը: Բլուրը գրեթէ կոնաձեւ ըլլալով, շրջապատի պարիսպները որոշ չափով բարձրացնելէ և անկանոն թափուած քարերէն մաքրելէ վերջ՝ ընդհանուր տեսքը աստիճանաւոր մեծ բուրգի մը երեւոյթը կը ստանար:

Յայտնի է թէ զգալի էն սկսած որմնաշինութիւնը թէ ստորոտէն, սակայն այս այնքան կարեւորութիւն չունի, քանի որ արդիւնքը նոյնն է: Ենթադրենք թէ բլուրին ստորոտէն սկսած ըլլան որմնաշինութիւնը: Բայց որովհետեւ տակաւին անգիտակ էին նոյնիսկ կառուցուելիք պատին որոշ ուղղութիւն տալու և առ այդ փոքր ի շատէ հիմերը պատրաստելու, այս պատճառաւ հազիւ թէ որմին յատակը յարգարած են: Քննութիւնը ցոյց տուաւ որ այս պարիսպները հիմ չունին: Եւ գրեթէ մեծ դժուարութեամբ յաջողած են հողին երեսին վրայ դնել մեծազանգուած քարերը: Այս պատճառաւ ալ հնար չէ եղած լարաձիգ ուղղութիւն տալ պատին, այլ ըստ յարմարութեան, երեւոյթով միայն հորիզոնական առաջին շարքը պատրաստուած է իրարու անհամապատասխան մեծ ու փոքր քարեր իրարու քով գետեղելով: Երկրորդ շարքին համար վերէն գլորեր են քարեր և իրենց հսկայական ծաւալով մի կերպ տեղաւորեր են առաջին շարքին վրայ, առանց յաջողելու զանոնք ուղիղ շարքի մը վրայ բերելու, այլ անոնց ինկած դիրքին մէջ աշխատել են քարերու զանգուածները հաստատել, որպէսզի անոնք անշարժ մնան և հնարաւոր ըլլայ երրորդ շարքը գետեղելու: Եւ որովհետեւ երկու շարք բարձրացած որմին վրայ դժուար պիտի ըլլար մեծազանգուած քարերը վեր հանել ու դնել, ուստի նախապէս հող լեցուցեր են բլուրի կողմի երեսին վրայ՝ շարքերուն վերի մակերեսը թին հաւասար և այնուհետեւ գլորեր են վերէն նոր քարեր:

Այս երեք շարքերը, որ այժմ պահուած են, պատին կու տան մօտաւորապէս երեք մեդրի բարձրութիւն մը: Սակայն վերի մասերուն քանդուած ըլլալուն պատճառաւ, յայտնի չէ թէ ինչ բարձրութիւն ունեցած են այս պատերը: Կոյն ձեւով շինուած են շառաւիղաձեւ պատերը:

Նախ քան ամրոցի ստորոտի պարիսպի դռնէն ներս մտնելը, պէտք է անցնիլ ամրոցը շրջապատող քաղաքատեղիէն, ուր տեղ տեղ յայտնի են թէ փողոցները և թէ բնակարաններու անաղարտ մնացած յատակաձեւերը:

Ստորին պարիսպին արեւելեան կողմին վրայ է ամրոցին առաջին դրան տեղը: Այս առաջին

դռնէն ներս, լայն ճանապարհ մը կը յառաջանայ դէպի հիւսիս՝ մօտաւորապէս 30-40 քայլաչափ: Այստեղ ճանապարհը երկուքի կը բաժնուի, մէկ ճիւղը կը յառաջանայ դէպի հիւսիս-արեւմուտք և յայտնի չէ թէ ուր կը տանի, որովհետեւ սաստիկ քայքայուած խառնուած են քարակոյտերը. իսկ միւս ճիւղը հիւսիսային ուղղութեամբ շեղակի կը բարձրանայ մինչեւ գագաթը, ամրոցի վերին շրջափակին դուռը՝ որ կը գտնուի հիւսիսային կողմը:

Գլխաւոր բարաւորները քանդուած են, սակայն տակաւին կը մնայ մաշուած սեւը: Գագաթի դռնէն ներս, ամրոցին ներքին մասը երկար քառակուսի ձեւ ունի և քայլ մը ներս, արեւելեան կողմին վրայ կը սկսի մեծ բնակարանի մը շինութեան յատակաձեւը, զանազան բաժանումներով, որը անտարակոյս իշխանին յատկացուած մասն է: Այս բնակարանին արեւմտեան կողմը, միջնաբերդին ամրոցը երկարութեան, անցք մը ձգելով, շինուած են յարակից այլ շինութիւններ հիւսիսէն հարաւ երկարած, որոնք դեռ բոլորովին մաքրուած և վերջացած չեն և շարք մը սենեակներ բնաւ ներքին հաղորդակցութիւն չունին: Ինչպէս կ'երեւի, իւրաքանչիւրը իրեն համար արտաքին դուռ ունեցեր է և ծառայած է իբրեւ շտեմարան:

Ամրոցին բլուրին ստորոտը, արեւմտեան կողմին վրայ հիւսիսէն դէպի հարաւ երկարող ծորանման վայր մը կայ, որուն ծայրը, հին առեւ, կը գտնուէր ամրոցին և քաղաքին արտաքին դուռը:

Այս փոքրիկ ծորանման վայրին հարաւ-արեւմտեան կողմը կը գտնուի պարսպապատ բլուր մը, որը իբրեւ պահնորդարան կը ծառայէր և կը պաշտպանէր արտաքին յարձակումներու դէմ թէ քաղաքը և թէ ամրոցը, որովհետեւ քաղաք մտնելու միակ ճանապարհը այս կողմն էր և դռնէն մտնողը, դեռ քաղաք չհասած՝ այս պարիսպին քովէն պէտք էր անցնէր:

Մեծ ամրոցի գագաթին պարզ կ'երեւի թէ ինչպէս շրջապատուած է եղեր թէ իշխանին մեծ ամրոցը, թէ քաղաքը փոքր ամրոցներով արեւելքէն և հարաւէն: Այս փոքր ամրոցներէն իւրաքանչիւրը կրկնուպեան մէկ պարիսպ մը ունի միայն:

Փոքր ամրոցներուն մօտիկ, բարձր տեղի մը վրայ կը գտնուի ամրոցներուն ժամանակակից արհեստական լիճը որ շինուած էր թերեւս անասնոց ջուր խմելու համար:

Առանց վարանման, պէտք է հաւատալ միանգամայն որ Հաճի Խալիլի ամրոցներն ու բերդաքաղաքը մեր թուականէն քսան դար առաջ գոյութիւն ունէր, և բնաւ չեն գործածեր որ և է կերպ մետաղէ, հաւանօրէն նոյն իսկ քարէ մուրճը, այստեղ »:

Թորամանեանի այս նկարագրականը, դարաշրջանին պարտադրած անվերապէս

շինարուեստի թերութիւններէն անկախ, Հաճի Խալիլի բերդերուն ռազմական դասակարգումը ցոյց կու տայ, ու նաեւ թէ ինչպէս Հայաստանի բնակիչները, ամենահին դարերուն իսկ, ունեցեր են ռազմական յաջող հասկացողութիւն մը:

Երկաթի դործածութեան դարաշրջանին, ռազմական շինութիւնները կը ստանան անելի վարպետ կեցուածք մը եւ կառուցումն ալ աւելի ճկուն երեւոյթ մը կը ներկայացնէ: Ասիկա առաջ կու գայ այն բանէն՝ որ շնորհիւ երկաթէ գործիքներու, կարելի կ'ըլլայ քարերը կոտրել եւ ստանալ աւելի փոքր ծաւալով վէճեր: Այս տեսակի օրինակ մը ունինք «Էրբլի Տէ-կիրմէն»ի ամրոցին վրայ, որուն յատկանշական շինուածքը կը կազմէ արդէն քառակուսի աշտարակներու պարիսպին վրայ յաւելումը: Սա ցոյց կու տայ արդէն ռազմաշինական արուեստին յառաջդիմութիւնը, որ կարելի եղած է շնորհիւ աւելի փոքր ծաւալով քարերու գործածութեան: Այս քարերուն վրայ որոշակի կ'երեւի երկաթէ գործիքներով աշխատուած ըլլալու նշանները, զանոնք կոփելու եւ կոկելու մտահոգութեամբ:

Երբ կը խօսինք երկաթի գործածութեան դարաշրջանի մասին, արդէն կը գտնուինք Ուրարտական շրջանին մէջ: Ուրարտական շրջանին շինարուեստի մեծ յառաջադիմութեան մը առջեւ կը գտնենք ինքզինքնիստ Վանի ամրոցներուն մէջ կրաշագանի գործածութեան հետքեր գտնելով, ինչ որ մեղ կը տանի քաղաքակիրթ ուրիշ ժողովուրդներէ ալ աւելի առաջնակարգ դիրքի մը:

Երբ կարելի կ'ըլլայ ստանալ փոքր կոտորուածքով քարեր եւ կրաշագան, այլեւս շինուածաձեւը եւ շինութեան արուեստը կը սկսի հիմնովին յեղաշրջուիլ: Շինութիւնը աւելի ճկուն դառնալով շինուածքն ալ կ'ըլլայ աւելի ճարտար: Այս վիճակէն մեծապէս օգտուեցան հայկական ռազմական կառուցումները: Թէեւ դարեր տա-


կաւին շարունակուեցան, մեծ մասամբ առանց կրաշագանի շինութիւնները՝ սակայն հայկական ամրոցներու, բերդերու եւ պարիսպներու քարերը իրարու կը զօդուէին երկաթէ կապերով:

Պէտք է մոռնալ թէ Հայաստան այդ դարաշրջանին երկաթ արտադրող չլիսաւ, եթէ ոչ միակ երկիրն էր մերձաւոր արեւելքի մէջ եւ յաճախ հայ թագաւորները, Ասորեստանի թագաւորներուն իրենէն կը զրկէին ձուլածոյ երկաթի կտորներ, ինչպէս այսօր պիտի զրկէին ոսկիի ձուլեր: Երկաթի այս արտադրութիւնն էր որ ոչնչացուց Հայաստանի անտառներուն մեծ մասը: Երկաթի հանածոյէն մետաղ ստանալու համար փայտի կրակ կը գործածէին, հանքածուխը դեռ անծանօթ ըլլալով:

Ինչ որ նկատելի է հայկական ռազմական ճարտարապետութեան մէջ, այն է թէ՛ հակառակ քարի գործածութեան ներկայացուցած բազմաթիւ դժուարութիւններուն, հակառակ հարաւի՝ Ասորեստանցւոց տուած աղիւսի գործածութեան օրինակին, հայ շինողը նախընտրած է քարէ շինութիւնները, զգալով կարծէք այդ ձեւի կառուցումներուն տուած բոլոր առաւելութիւնները, մանաւանդ երբ կարելի եղած է փոքր ծաւալով քարեր ստանալ եւ անոնցմով կառուցանել պարիսպները եւ զանոնք զօրացնող աշտարակները:

Հայկական ռազմաշինութիւնը իր լիակատար զարգացումը գտաւ, կրաշագանի գործածութեան ընդհանրացումով, որուն շնորհիւ ան կրցաւ ի յայտ բերել՝ ռազմական շինութիւններու մէջ ալ զըլուր-գործոցներ, որոնք նոյնիսկ հռոմէական եւ բիւզանդական շինութիւններու հետ բաղդատուելով նորէն կը շահին առաւելութիւններ:

Ուրարտական շրջանի կրաշագանի գործածութեան հաղորդէպ նմոյշներէն վերջ պէտք է գալ մինչեւ քրիստոնէական շրջ-



ՊԱՏ. 1. - Յատակագիծ կուկլակայքերով:

ջանք, ի նորոյ կրաշաղախի գործածութեան հանդիպելու համար մեր ճարտարապետութեան մէջ: Եւ տասնհինգ դարու կանխադառնութեամբ մը այսօրուան շինարուեստէն, հայերը կը հնարէին կրաշաղախը (պէթոն):

Մեր նախնիք, պէթոնը կը պատրաստէին կրաշաղախէն, անոր մէջ խոռոնելով՝ բացի աւազէն՝ խիճեր ու քարերու կտորուանքներ⁽⁹⁾: Այս կերպ պատրաստուած խճաշաղախը կը լեցնէին երկու կարգ շարուած կոփածոյ՝ սրբատաշ քարերու միջեւ: Այս քարերուն ներքին երեսները պահելով իրենց բնական, անտաշ

խորտուրորտութիւնը, դիւրաւ կը մածուցուէին խճաշաղախին հետ եւ այս վերջինին կարծրանալէն վերջ անոր հետ կը կազմէին միակտուր զանդուածով որմ մը՝ որուն երեսները ծածկուած կ'ըլլային սրբատաշ քարերով:

Այսպէս կը շինէին առհասարակ մեր բոլոր յիշատակարանները, ապշութեան մատնելով հասարակ դիտողը, ի տես այս սրբատաշ քարերով ծածկուած պատերուն: Իրականին մէջ այս քարերը՝ երկու կարգի վրայ շարուած՝ կը ձեւացնէին տեսակ մը կաղապար (coffrage) շինուածքին: Ինչպէս այժմ՝ շատ աճապարող

(9) Կիր կամ սիմէք խոռոնուած աւազի՝ կու տայ «շաղախ» (mortier), որ կ'ըլլայ կիրի շաղախ եւ կամ սիմէքի շաղախ: Երբ շաղախին մէջ կ'աւելցուի խիճ, կը ստացուի խճաշաղախ (Béton), որ կ'ըլլայ կիր եւ կամ սիմէքի խճաշաղախ, շաղախին կազմութեանը համեմատ: Սիմէքը ուրիշ բան չէ, բայց եթէ կիր՝ որուն

պատրաստութեան առանձին աւելցուցած են 20-40% կաւ (argile), շատ բարձր ջերմութեան մը տակ՝ 1500 աստիճան: Սիմէքին հայերէնը՝ «կրաղիւս» սխալ է: աղիւսը «պրիք»ն է, արուեստական քարը: Պէտք է աւելի ճիշդ անուն մը գտնել անոր կազմութեան ներքինը:


քաղաքակրթութիւնը կը գործածէ փայտէ կաղապարներ պէթոնէ իր շինութիւններուն համար:

Անցողակի ըսեմ թէ՛ այս սրբատաշ քարերու գործածութիւնը որմերու ներքին եւ արտաքին երեսները ծածկելու համար, պատճառ եղաւ որ ծեփի գործածութիւնը շատ չընդհանրանայ մեր ճարտարապետութեան մէջ, եւ նաեւ քաղաքագործութիւնը աւելի տեղ բռնէ մեր մէջ՝ քան խճաշաղախութիւնը (mosaïque) եւ կամ որմանկարչութիւնը:

Այս կերպ խճաշաղախով էր որ շինուեցան հայկական պարիսպները, որոնց արտաքին եւ ներքին երեսներու սրբատաշ քարերը, արդէն ինքնին կու տային խոշոր հաստութիւն մը, որուն վրայ պէտք է աւելցնել խճաշաղախ միջուկին հաստութիւնն ալ: Այսպէս կը ստացուէր 1 1/2-3 մետր հաստութեամբ որմեր, որոնց՝ առ նուազն՝ միջուկները կ'ունենային 1 մետրի հաստութիւն մը: Հայ վարպետը, այս հաստ միջուկը կաղմող պէթոնին մէջ կ'ընկղմէր նաեւ քարերու անտաշ մեծ կրտորներ, որոնք որմին ամրութիւնը ապահովելով միասին զգալի խնայողութիւն մը կու տային խճաշաղախի գործածութեան: Այսօր նմանօրինակ շինութիւններու կու տան «Կիկլոպեան որմ» անունը:

Այս ձեւով շինուած պարիսպ մը կը կազմէ միակտուր զանդուած մը, որ թըշնամիին հարուածներուն տակ չէր կրնար քայքայուիլ: Եթեւեթ շինուածքը այնքան միակտուր կ'ըլլար, որ օրինակ՝ Անիի մէջ ամբողջ աշտարակ մը վար գլորուէր է, առանց որ հսկայ աշտարակը քայքայուի, այլ պարզապէս քովնոր պառկէր է իր ամբողջ երկարութեան վրայ: Ահա հայ շինուածքին լաւ տեսակէ ըլլալուն մէկ օրինակը: Այսպիսի որմնադրութեամբ էր որ հայերը կը կառուցանէին իրենց բերդերն ու պարիսպները:

Ընդհանրապէս հայկական ռազմավա-



ՊԱՏ. 2. - Ղամբրուծի բերդը:

րութիւնը կը փնտէր անառիկ վայրեր, ամրոցներու եւ բերդերու կառուցման համար, բան մը՝ որ չէր պակսեր Հայաստանի մէջ: Այսպիսի վայրերու մէջ կը գոհանային առ հասարակ մէկ շարք պարիսպով մը, որուն քարաշէն, պէթոնուած հաստատուն շինուածքը՝ միացած տեղւոյն անառիկ դիրքին եւ շինուածքին ճարտար յարդարումին՝ կը դարձնէին բերդը հզօր եւ անպարտելի:

Սակայն, երբ պէտքը կը տեսնուէր, հայ ռազմավարը եւ վարպետը չէին քաշուիլ՝ նոյնիսկ երկու շարք պարիսպներ շինելու, ինչպէս կը տեսնենք, օրինակ՝ Անիի պարիսպներուն մէկ մասին վրայ եւ կամ Արտաշատի արեւելեան պարիսպներուն վրայ: Այսինքն հոն՝ ուր բնութիւնը չէր դար իր տեղադրական յարդարումով օգնել պաշտպանութեան դժին:

Հայկական բերդաշինութիւնը կը բաղկանար իր ամբողջութեանը մէջ, նախ՝ յառաջացեալ խրամատէ մը, ուր կարելի կ'ըլլար, ի հարկին, ջուր լեցնելով անանցանելի արդելք մը առաջ բերել եւ արդիւնէն իր թշնամին պարիսպներուն խալիսին մօտենայ: Այս խրամատէն բաւական հեռու, որպէսզի խրամատին ջուրը հողին տակ ըրած սուղումներովը բեր-


գին հիմը չքայքայե, կը կառուցանէին առաջին գիծի պարիսպները, զօրացած կըլոր եւ կամ քառակուսի աշտարակներով: Ընդհանրապէս այս առաջին գիծի շինութիւնները կ'ըլլային թեթեւ եւ չունէին երկրորդ կարգի պարիսպներուն հաստութիւնը եւ բարձրութիւնը:

Առաջին շարքի պարիսպները, նկատի ունենալով յարձակող բանակին գործածած մագլցումի շարժուն սանդուխներու բարձրութիւնները, չէին անցնիր 8 - 10 մեդրը, մինչդեռ աշտարակները կ'ըլլային աւելի բարձր, մօտաւորապէս 12 մեդր, ուրկէ կարելի կ'ըլլար իշխել պարիսպին վրայ եւ ներսը:

Այս առաջին գիծէն ներս, մօտաւորապէս 15-20 մեդր հեռաւորութեան մը վրայ կը կառուցանէին երկրորդ գիծի պարիսպները⁽¹⁰⁾: Երկրորդ գիծին յարդարումը այնպէս էր որ կարելի կ'ըլլար այս պարիսպներէն ալ հարուածել թշնամին, որ կը գտնուէր խրամին եզերքը: Հայ նետաձիգները դիւրաւ կը հարուածէին իրենց նետերով 60 - 80 մեդր հեռաւորութեան վրայ: Պարիսպներու այս ձեւ շարուածքով, թշնամին կը գտնուէր երկու կարգ կռուողներու առջեւ, որոնց միայն առաջին գիծին ինքը կրնար յարձակիլ, մինչդեռ երկրորդ գիծը անխափան գինքը կը հարուածէր: Այս երկու կարգ պարիսպներու աշտարակներուն շարուածքն ալ այնպէս մըն էր, որ մէկ գիծին աշտարակները կրնային հարուածել միւս գիծին աշտարակներէն մնացած «անտեսանելի անկիւններ»ը (angle morte):

Ուրեմն, բուն պաշտպանողական գիծը կը կազմէին երկրորդ շարքի պարիսպները, որոնք այս պատճառաւ կը շինուէին


աւելի հաստ եւ աւելի բարձր: Պարիսպներուն բարձրութիւնը նուազագոյնը կ'ըլլար 12-14 մեդր, իսկ աշտարակները մինչեւ 18 մեդր բարձրութիւն մը կ'ունենային:



ՊԱՏ. 4. - Հայկական կրկնակ պարիսպներու դասաւորումը.

Բերդերու կառուցման տեսակէտով, նախ կը շինէին պարիսպի մը որմը, որ ամէն բանէ առաջ կը սահմանափակէր քաղաքը եւ կու տար առաջին պաշտպանողական շինուածքը: Ասկից դառ՝ այս հաստ եւ մանր պատերը՝ իրենց իսկ ծանրութեան տակ որոշ կէտմ մը կ'ունենային, այսինքն իրենց հիմերը կը նստէին գետնին վրայ: Անգամ մը որ այս անխուսափելի շարժումը կառուցուածքին մէջ տեղի ունենար, ալ կը սկսէին շինել աշտարակները, ներկայացուած պահանջին եւ տրամադրելի դրամական միջոցներուն համեմատ, անոնց շինութիւնները չըջաններու վրայ բաժնելով: Այս է պատճառը՝ որ միեւնոյն պարիսպին վրայ կը գտնենք տարբեր շինութեան թուականներով աշտարակներ:

Պարիսպներու եւ աշտարակներու միատեղ չշինուելուն գլխաւոր պատճառներէն մէկն ալ այն է՝ թէ այս աշտարակները



ՊԱՏ. 3 - Արտաշատի յատակագիծը.

(10) Անիի մէջ այս հեռաւորութիւնը փոփոխական է, տեղ տեղ 15 մեդր, այլուր 20 մեդր. հաւանաբար պարիսպներուն հիմերուն հաստաւորութեան մը փոփոխութեան պատճառաւ:

չատ աւելի ծանր շինուածքներ ըլլալով քան պարիսպները՝ իրենց կըռմն ալ (tassement) հիմերու գետնին վրայ՝ կ'ըլլար աւելի մեծ։ Եթէ պարիսպ եւ աշտարակ միատեղ շինուած ըլլային, կըռմններու տարբերութեան պատճառաւ վնասակար ճեղքեր պիտի գոյանային պարիսպին որմին վրայ։ Այս անպատեհութեան առաջքը կարելի կ'ըլլայ առնել անոնց իրարմէ անկախ, զատ զատ կառուցուամով։ Ասով ոչ մէկ ճեղք ու տկարութիւն առաջ կու գար շինուածքին ամբողջութեան մէջ։

Պարիսպները վերջաւորուած էին ատամնաւոր պատնէշով մը, որուն ետեւը պահուրտած պատերազմիկները նետահար կ'ընէին թշնամին, առանց անկէ տեսնուելու։

Հայոց մէջ չէ գործածուած mâchecoulis-ի դրութիւնը որ կը կայանայ ատամնաւոր պատնէշը, պարիսպին պատէն յառաւարկառ գիրքով մը շինելուն մէջ։

Այսպէս շինուածքին ներքնածակերէն դրութեամբ քարերը՝ զարնուելով պարիսպի ոտքերուն կը ժայթքէին թշնամին վրայ։

Այս ձեւ կառուցումներ, արդէն Եգիպտոսի քիւփի փորձած էին շինել եւ Հայոց անծանօթ պէտք չէ ըլլային։ Սակայն՝ հայ ռազմաշինութեան հաճելի չէր թուեր, որովհետեւ վերէն նետուած խոշոր քարերը վերջ ի վերջոյ կը խանդարէին ու կը վնասէին պարիսպի ոտքի քարերը։ Բիւզանդական ռազմաշինութիւնն ալ չէ գործածած նման շինութիւններ։ Մինչդեռ Միջնադարեան եւրոպական ամրոցները եւ գլխաւորները խճողուած են նման կառուցումներով, որոնք՝ պէտք է խոստովանիլ՝ բացի ռազմական արժէքէ, կու տային շինուածքին նաեւ տեսակ մը զարդարանք աշտարակներու զաւաթին։

Բնական է թէ mâchecoulis-ի չդրութեամբ, հայ բերդապահները չէին կրնար ուղղակի հարուածել թշնամին, եթէ ան

հասած էր պարիսպին ոտքը։ Ասոր համար ալ հայերը կը շինէին աշտարակներ, որոնք պարիսպի միապաղաղ դիմէն դուրս ձգուած, կրնային կողմնակի հարուածել թշնամին՝ որ հասած էր պարիսպին ոտքը։ Այս պարագան կը ծառայէր աշտարակներուն թիւը, շարուածքը եւ հեռաւորութիւնը ճշտելու հաշիւներուն։ Այսպէս հայերը կը յաջողէին խաչածելուած նետահարութեամբ մը՝ մէկ աշտարակէն միւսը՝ հարուածել թշնամին ճիշտ այն կողմէն, ուրիշ անոր վահանը եւ կամ զրահը չէր կրնար զինքը պաշտպանել։

Հակառակ որ ասորական, պարսկական եւ նոյնիսկ բիւզանդական ռազմաշինութիւնները կը գործածէին առատ կերպով քառակուսի աշտարակներ, հայերը կը նախընտրէին կլոր շինուածքները, թէեւ վերջիններուն կառուցումը աւելի սուղի նստէր։ Սակայն կլոր աշտարակներուն ներկայացուցած առաւելութիւնները կը փոխարինէին իրենց սուղ արժեւը։ Արդարեւ, կլոր աշտարակները «անտեսանելի անկիւններ»ու (angle morte) անպատեհութիւնը իր նուազագոյն վիճակին կը վերածեն, մինչդեռ քառակուսի աշտարակները, իրենց անկիւնաւոր ըլլալուն պատճառաւ, աւելի մեծ միջոց մը կը ծածկեն բերդակալներու տեսողութենէն։ Ասիկց զատ, կլոր աշտարակները կը ներկայացնեն՝ իրենց շինուածքին ձեւին պատճառաւ՝ աւելի տոկունութիւն, իրենց արտաքին երեսին տրուած հարուածներուն դէմ։ Կլոր աշտարակներու որմը, իր քարերուն շրջանակի շարուածքով կամարի դեր կը կատարէ եւ հարուածներուն տակ անոր որմը փոխանակ քայքայուելու, կամարի մը նման կը ճնշուի, ինչ որ որմաչէն շինուածքի մը յայտարարն է։


Նետաձգութիւնը որոշ հեռաւորութեան մը վրայ տեղի ունենալով՝ այս աշտարակները կը շարուէին 40-50 մետր իրարմէ հեռու, որպէսզի կարելի ըլլար մէկ աշ-

տարակեն միւսը նետաձգութիւնը խաչա-
ձեւէ: Այս հեռաւորութիւնը Անիի մէջ՝
15-20 մեդր է հիւսիս-արեւմտեան կըրկ-
նակ պարիսպներուն համար, մինչդեռ 40-
50 մեդր՝ արեւմտեան կողմի աշտարակ-
ներէն ոմանց համար:

Այս աշտարակները, որոնք ամրոցին
նազմական յարգաւորումին գլխաւոր մա-
սը կը կազմեն, պարիսպէն անկախ շին-
ուելով հանդերձ, անկախ կը մնային նաեւ
ներքին յարգաւորումի տեսակէտով, այն-
պէս որ եթէ նոյնիսկ թշնամին յաջողէր
առաջին դիմի պարիսպները մագլցելով
անցնիլ, երկրորդ դիմին դէմ չէր կրնար
յաջող յարձակում կատարել, քանի չէր
կրցած մի առ մի դրաւել զօրեղ աշտա-
րակները, որոնք այս անգամ զինքը կը
հարուածէին թիկունքէն:

Հայկական շինութիւններուն մէջ, աշ-
տարակները ծածկուած չէին: Աշտարակ-
ները ծածկելու դրութիւնը աւելի միջնա-
դարեան սովորոյթ մըն է, բարաններու
նետած եւ ուղղաձիգ ինկող քարերու հար-
ուածներէն բերդապահները պաշտպանե-
լու համար: Սակայն այս քարաձգութիւ-
նը այնքան թերի էր հայկական շրջանին՝
որ բերդապահները իրական ոչ մէկ վը-
տանդի կ'ենթարկուէին այս կողմէն, եւ
հետեւաբար անպէտ կը դառնար ծածկոյ-
թը: Պէտք չէ մոռնալ՝ թէ ինչպէս այսօր,
այն ատեններն ալ կառուցուածքի մը ելեւ-
մտական մասը կարեւոր դեր մը կը խա-
ղար եւ կարելի խնայողութիւնները ըս-
տիպուած էին ընել, ջնջելով բոլոր աւե-
լորդ շինութիւնները:

Աշտարակին հիմը կը կազմէր պէքոնի
հսկայ զանդուած մը, անոր ամրոցը հաս-
տութեան վրայ, այս կերպով՝ թշնամիին
ընդերկրեայ անցքերով յարձակումները
անկարելի կը դառնային: Իսկ զանազան
յարկերը որոնք կը բարձրանային 12-18
մեդր բարձրութեան վրայ, ծածկուած էին
քարաշէն կամարակապ շինութիւններով:



ՊԱՏ. 5.՝ Յատակագիծ Մուգ կամ Մուտ բերդի. առ
հասարակ կիլիկեամ հայ ռազմաճարտարա-
պետութիւնը մերձնուած է խաչակիրներու
արեւմտեան ռազմաճարտարապետութեան,
վկայ՝ սա յատակագիծի մէջ գետնը ու
կլոր տօմօմը, ամկախ պարիսպներէն:

Ընդհանրապէս սանդուխը կը շինէին որ-
մին հաստութեան մէջ իսկ, պարիսպին
ներքին կողմէն, հոն ուր թշնամիին հար-
ուածներուն նուազագոյն կարելիութիւնը
կար:

Այս աշտարակներն էին որ միջին դա-
րուն կրելով զանազան յաւելումներ եւ
ընդարձակումներ՝ վերածուեցան դղեակ-
ներու:

Հայաստանի միջնադարեան ռազմաշի-
նութիւնները կը տարբերին նաեւ միեւնոյն
շրջանի եւրոպական շինութիւններէն՝
տոմօն-ի չգոյութեամբ: Տոմօն-ը, ամ-
րոցին մէջ կառուցուած ամրակուռ աշտա-
րակ մըն է, բոլորովին անկախ ամրոցին
ուրիշ շինութիւններէն: Այս աշտարակը
կը ծառայէր ամրոցին տիրոջ՝ որպէս բը-
նակարան եւ որպէս դերագոյն դիմա-
դրութեան վայր: Հոս էր որ իշխանը կը
պահէր իր գանձը: Այս պատճառաւ ալ
անոր շինութիւնը մասնաւոր ուշադրու-
թեան առարկայ կ'ըլլար: Նորագոյն դա-
րերուն այս տոմօն-ին կցուեցաւ աւելի

հանգստաւէտ բնակարան մը, բայց ան
միշտ պահեց իշխանին դերագոյն ապա-
տանարանի իր նախնական յատկացումը:
Հայաստանի ամրոցները չունին այս շին-
ուածքը, ի փոխարէն կիլիկեան շրջանի
ամրոցներէն ոմանք ունին տոմօն մը.
օրինակ՝ «Մուգ կամ Մուտ բերդ»⁽¹¹⁾:

Կիլիկիոյ մէջ հայկական ճարտարապե-
տութիւնը, կրնանք ըսել, դորձածուեցաւ
գլխաւորաբար ռազմական շինութիւննե-
րու: Հոն չենք հանդիպիլ Հայաստանի
մէջ եղածին նման հայ ճարտարապետա-
մէջ եղածին նման հայ ճարտարապետա-
մէջ եղածին յիշատակարաններու: Որով-
հան ուրիշ յիշատակարաններու: Բերդ-
հետեւ կիլիկեան շրջանը դերագոյնացաւ
պայքարի, պատերազմի շրջան մըն է,
ուր ժողովուրդը մը կը ճգնի իր սուրին
ուժովը հաստատել անկախ պետութիւն
մը: Այս պայքարի շրջանին վրայ հասան
արեւմտեան իշխաններն ու ասպետները,
խաչակիր ըսուած բազմութիւններու գը-
լուխն անցած: Ասոնք բերին իրենց ռազ-
մաշինական արուեստը, որմէ անխուսա-
փելիօրէն աղդուեցան կիլիկեան շրջանի
հայկական ռազմական շինութիւնները:
Փոխանցուած շինութիւններուն կարգին,
ներքնապարիսպն (տոմօն) ալ անցաւ
կիլիկեան շինութիւններու մէջ, ինչպէս
արեւմտեան ինչ ինչ շինուածաձեւեր, օ-
րինակ՝ Լամբրոնի բերդին ներքին ապա-
րանքին դրժածեւ սրարոլորակ պատու-
հանները⁽¹²⁾:

Հայկական ռազմաշինութիւնը մեծ կա-
րեւորութիւն կու տար նաեւ պարիսպի
դռներու կառուցումին: Արդարեւ, ամրու-
թեան տկար մէկ կէտը կը կազմէր բեր-

դին դուռը, ուսկից թշնամին կ'աշխատէր
ընդհանրապէս ներս խուժել:

Բերդին դուռը կը պաշտպանուէր աշ-
տարակներով: Ան միշտ կը գետնէն վեր-
երկու աշտարակներու միջեւ, որոնց խա-
չաձեւուած հարուածներուն տակ՝ թըշ-
նամին կը ստիպուէր հեռու կենալ դռնէն:
Մասնաւորապէս կարեւորութիւն կը տըր-
ուէր ալ կողմի աշտարակին, որովհետեւ
այդ կողմի բերդապահները դիւրաւ կըր-
նային հարուածել թշնամին, որուն վա-
հանը կը գտնուի ձախ թեւին վրայ: Այս
ձեւ շինուածքի մը դեղեցիկ օրինակը կը
գտնենք Անիի մէջ, որուն Դուինի դրան
աջակողմեան աշտարակը, իր առաջ եր-
կարած դերովը կը կազմէ կարեւոր
պաշտպանողական շինուածք մը, մինչ-
դեռ նոյն դրան ձախ կողմը, պարզ պա-
րիսպի որմ մըն է:


Պարիսպին դռնէն ներս, կը ջանային
ոլորապտոյտ շինութիւններով աւելցնել
խոշորագոյնները: Ընդհանրապէս պարսպա-
դռներուն առջեւ կը գտնենք երկու կամ
երեք շարքի պարիսպներ, իրարմէ անկախ
եւ իւրաքանչիւրը յանձնուած տարբեր
հրամանատարներու: Այսպէս առաջը
կ'առնուէր նաեւ դաւաճանական ձեռն-
արկներու, բերդին դռները թշնամիին
առջեւ բանալու: Յաճախ՝ այս դռներուն
պաշտպանութիւնը աւելցնելու համար կը
չինէին մասնաւոր պահակաւորներ,
ուրիշ պէտք էր անցնէր ամէն ներս մըտ-
նող: Ներս մտնողները պէտք էին իրենց
ինքնութիւնը յայտնել, ոչ ոք կրնար ան-
նշմար մնալ:

(11) Աւելան. Սիսուան էջ 288. «Յիշեցուք միայն
զաւերակս բերդին (Մուգ կամ Մուտ), ի բերդի հիւ-
սիսակողմն, որոյ միայն տակաւին մասն մի պարսպաց
մարտկոցը եւ քառակուսի աշտարակօք, յարեւմտեան
մասնէն զգրկեալն կրկնապարիսպ կամ աշտարակ մի մեծ
բոլորը եւ եռալարկ. ի ստորեւն՝ 14' թանձր որմովը,
յորոց մէջն զործեալ են սանդուղք վերելից, վերին մասն
6' թանձր է»:

(12) «Ի պարսպամէջին երեւին մնացորդք ոչ սակաւ
քառակողմն բրգանց, մասամբ՝ ի քարածոկն փորելոց,
երկայնաձեւ շինուածք մի (թերեւս ապարանքն) յերիս
արեւեալ ընդ լայնութիւնն, համակ սրբատաշ վիմօք, եւ
կամարակապք, զոթածեւ սրարոլորակ պատուհան ու,
նեւով յարտաքին որմունսն»: Աւելան, Սիսուան էջ 79.
Ս. Ղազար 1885:

Բացի հորիզոնական բացուող երկաթապատ դռներէ՝ կը շինէին նաեւ ուղղաձիգ վանդակապատ շինութիւններ, որոնք կ'ընկնէին դռան ետեւ, ճամբան դոցելու համար:

Պարխալին ջրափոսին վրայ կը դետեղէին փայտաշէն շարժուն կամրջակ մը, զոր կը վերցնէին թշնամին մօտեցած պահուն, եւ կամ ամէն դիշեր մուծը կոխելուն:



ՊԱՏ. 6. - Հովուականութիւնի պահակատան յատակագիծը.

Հայկական ռազմաշինութիւնը չի պարփակուիր միայն պարխալներու եւ աշտարակներու շինութեանց եւ յարգարումին մէջ: Ասոնց քովն ի վեր հայ վարպետը կը կառուցանէր զօրանոցներ եւ զինուորական ուրիշ շինութիւններ, կամուրջ, պահականոց, եւն. որոնց զեղեցիկ կառուցումներու օրինակները կը դտնենք Հայաստանի մէջ: Օրինակ՝ Վաղարշապատ:

Նի մօտ (Ալաշկերտ) Հովուականութիւնի սիւնաղարդը պահականոցը⁽¹³⁾:

Ալ չեմ ծանրանար բերդերու եւ ամբողջներու մէջ շինուած զանազան երկրորդական կառուցումներու վրայ, զադունի դռներ, սանդուխներու եւ դռներու առջեւ որոգայթներ, եւ այլն, որոնց մէկ նկարադրութիւնը կու տայ խորհնացին՝ Երուանդ Բ. Երուանդակերտի միջնաբերդին նկարադրութեան մէջ.

«Զմիջնաբերդն ամրացուցանէր բարձր պարսօք, և դրունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին, և ելանէլիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչեւ ցլուսնն. և ի նմա որոգայթս իմն ծածուկս ընդ մէջ աստիճանացն, որպէս զի ըմբոսնոցի՝ թէ ոք գաղտ ելանէլով դաւել կամ միջի զարքայն: Եւ էր, ասեմ, երկգիմի. որպէս զի մինն լիցի սպասաւորացն արքունի և ամենայն ելեւմտից ճանապարհ տուրնջենային, իսկ միւսն զիշերային և մարդադաւաց⁽¹⁴⁾»:

Բայց այս տեսակ շինութիւնները կ'ընդնան աւելի հնարամտութեան սահմանին մէջ քան ռազմաճարտարապետութեան: Նման հնարքներ բիւզանդացիք ալ ունեցան աւելի վերջը:

Հայ ճարտարապետը, որ չինեց այս բերդերն ու պարխալները, նկատի ունենալով հանդերձ անոնց ռազմական արժէքը եւ դերը, չմոռցաւ նաեւ իր ինքնածին գեղարուեստաւորութիւնը եւ առանց որ այդ շինուածքներուն դիմադրական ոյժը պակսի, զարդարեց այդ բերդերը գունաւոր, սեւ եւ վարդադոյն քարերով: Այս քարերը ընդելուզելով պարխալին միւս քարերուն հետ՝ պէքովին մէջ կազմեց զարդեր, որոնք գեղեցկացուցին բերդերուն մուտքի դռները: Այս տեսակ օրինակ

(13) Աւելան. Այրարատ էջ 25. «Երկոքին անուանեց և ձեւ շինուածոյն յայտ առնեն, զի արդարեւ պահակաց տուն և տեղի էր յանցս Երասխայ, ի վաղարշայ կամ յայլմէ կանխագոյն բան զնա կարգեալ՝ թէպէտ ի զգուշութիւն ճանապարհորդաց և թէպէտ վասն արքունի բաժնից կամ զինուորական տեսչութեան»:

Այս չէնքը զոր Սերէոս կը կոչէ բոլորապահակ, որ է զինուորական պահակատուն, շինուած է տաճարածեւ ոճով և կը բովանդակէ ութը կլոր սիւններ, որոնք եռակարգ սրակամարներով կապուած էին իրարու հետ:

(14) Խորհնացի Բ. Լ. Էջ 254, տպ. Ս. Ղազար 1881.

մը կրկին Անիի պարխալները մեղի կու տան: Իրօք անոնց արեւելեան պարխալի դուռը որ Երեւանեան եւ կամ Դուռնադուռ կոչումով ծանօթ է, զարդարուած է սեւ եւ ճերմակ քարերով եւ առիւծի մը քանդակով: Նմանապէս գունաւոր քարեր կը դործածէին ինչ ինչ աշտարակներու վրայ զարդախաչեր ձեւաւորելու համար, տալով այսպէս շինուածքներուն՝ բացի ռազմական արժէքէ՝ գեղարուեստական հրապուր մը եւս:

Այս ռազմական շինութիւններու նկարադրութեան տեսանք թէ հայկական ռազմաշինութիւնը ոչինչով ետ կը մնար իր դրացի ժողովուրդներու եւ կայսրութիւններու շինութիւններէն: Անոնց հաստատուն եւ անառիկ կերտուածքը զրաւական մը պէտք էր ըլլար հայկական պետութեան անկախութեան: Բայց պատերազմին մէջ միայն պարխալը եւ բերդերը չեն որ կը կատարեն զլիաւոր դերը: Հայ ճարտարապետը տուաւ իր հանճարին բոլոր հնարքները շինելու համար կատարեալ պաշտպանողական զէնք մը. պէտք էր զայն արժէքնող ձեւեր ու մկաններ:

Որքան ատեն որ այս մկանները գոյութիւն ունեցան, հայկական պետութիւնը ապրեցաւ հայ վարպետին տուած պարխալներուն չուքին տակ: Բայց եկաւ ա-

տեն մը, ուր մկանները թուլցան, յոգնեցան ու չկրցան պահպանել ու արժեքնել անառիկ բերդերու դիրքերը եւ անոնք ինկան մի առ մի արշաւող հրոսակներու ալիքին տակ, իրենց հետ տապալելով՝ դաւերու տեւողութեամբ՝ հայկական պետութիւնը:

Միթէ միեւնոյն պատճառաւ չէ՞ր որ ինկաւ նաեւ հպարտ Բիւզանդիոնը: Որովհետեւ ան չուէր այլեւս իր պարխալներուն եւ աշտարակներուն մէջ երկաթէ մը կաններ: 1451-ին՝ մօտ դար մը վերջը, մեր Լեւոն Ե. Թագաւորին զերի իշխան, Բիւզանդիոն հաղիւ կրնար իր պարխալներուն վրայ դնել 7000 կռուողներ, թուրք անհամար բանակին դիմաց. եւ այս թիւին կէսէն աւելին բիւզանդացիներ իսկ չէին, այլ ճենովացիներ եւ իտալացիներ: Եւ մինչդեռ բուն բիւզանդացի զինուորը թոյլ եւ անընդունակ այլեւս պատերազմական ճիւղի՝ կ'ընկրկէր, օտար վարձկանը կը մնար տակաւին պատնէշին վրայ կռուելով:

Բերդ մը, պարխալ մը, ամրոց մը կ'ունենայ իրական ռազմական արժէք, որքան ատեն որ հոն բնակող զինուորը ուժեղ է, եւ կորովի ֆիզիքապէս եւ բարոյապէս:

Ճարտ. Ս. ՃԵՎԱՆԻՐՃԵԱՆ

(Շարունակելի)

ԱՌԸՆՁՈՒԹԻՒՆՆԵՐ

(CORRESPONDANCES)

Տաճար մ'է բնութիւնն ուր սիւներ կենդանի
Լըսկի կ'ընեն մերթ անորոշ բարբառներ,
Ու մարդը ման կու գայ խորհուրդի անտառներ՝
Որոնք-դիւր կը զընեն ակնարկով ընտանի:

Հեռակայ շրջութուղ գերթ երկաթ արձագանգ,
Մըթազին ու խորունկ միութեան մը մէջէն,
Անտանան գիշերին ու լոյսին հանգուակ,
Բուրում, գոյն և հնչիւն իրարու կը ձայնեն...

Կան բոյրեր որ թարմ են միտերու պէս մանկան,
Սրինգներու պէս անոյշ, մարդերու պէս գալար,
Ուրիշներ ախտաւոր, հարուստ ու յաղթական՝

Որ ունին ծաւալում իրերուն անլախճան,
Ինչպէս մուշկն ու կնդրուկ, խունիկ բոյրն ու յամպար,
Որ սրացումը կ'երգեն մութին և ըզզացման...

CHARLES BAUDELAIRE

Թարգմ. Մ. ԱԹՄԱՃԵԱՆ